“Future Today. Empowering women, youth, and children for deepening democracy in Armenia”

Slovak Transformation Fund
City Experiment Fund

CaseKey
BUSINESS CASE COMPETITION

ԲԻԶՆԵՍ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄՐՑՈՒՅԹ

Հունիսի 12 / 18, 2022

ՏՓԵՓԱՆԱՎԱՆ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐ

nation inaction

Aurora Baréalisse
creative marketing agency

Central Bank of Armenia

Ստեփանավան խոշորացված համայնքի կարճ նկարագիր

Ստեփանավան խոշորացված համայնքը, որն իր մեջ ընդգրկում է Ստեփանավան քաղաքը, Ուրասար, Կաթնաղբյուր և Արմանիս գյուղերը գտնվում է ՀՀ Լոռու մարզի վարչատարածքային կազմի մեջ՝ գտնվելով մարզի գրեթե երկրաչափական կենտրոնում, Ձորագետի միջին հոսանքի աջ և ձախ ափերին: Ընդհանուր տարածքը 5333.6 հեկտար է, որից 1020 հա-ը կառուցապատված: Մայրաքաղաք Երևանից գտնվում է 157 կմ, իսկ մարզկենտրոն Վանաձորից՝ 36 կմ հեռավորության վրա:

Ստեփանավան համայնքի ամբողջ երկարությամբ՝ արևելքից-արևմուտք անցնում է Հայաստանը ԱՊՀ երկրների հետ կապող Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության Մ3 ավտոմայրուղին, որը համայնքի համար ունի ռազմավարական և սոցիալ-տնտեսական նշանակություն: Ստեփանավանից սկսում են 3 հանրապետական նշանակության ճանապարհներ՝ Ստեփանավան-Ալավերդի, Ստեփանավան-Պրիվոլնոյե-Ախքյորփի և Ստեփանավան-Կաթնաղբյուր: Համայնքը գտնվում է հանրապետության հյուսիսային մասի սեյսմոակտիվ գոտում: Ստեփանավանից հյուսիս-արևելք մոտ 15կմ հեռավորության վրա է գտնվում Ստեփանավանի օդանավակայանը, որտեղ պահպանվել է միայն թռիչքուղին և ներկա պահին չի գործում: Օդանավակայանը պատկանում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը:

Ստեփանավան համայնքը դեռ խորհրդային ժամանակներից հայտնի է եղել՝ որպես հիմնականում պասիվ հանգստի գոտի՝ իր սոճիների անտառներով պայմանավորված: Ունեցել է բազմաթիվ հանգստյան ենթակառուցվածքներ: Այժմ զբոսաշրջություն շարունակում է մնալ համայնքի զարգացման գերակա ուղղություններից մեկը: Սակայն խորհրդային ժամանակների ենթակառուցվածքներից շատ քիչ բան է պահպանվել: Համայնքը ունեցել է նաև արդյունաբերական մեծ պոտենցիալ, սակայն, կրկին, բոլոր գործարանները փակվել են 90-ականներին:

Ստեփանավանն այսօր

Ստեփանավան համայնքը հանրապետության գողտրիկ քաղաքներից մեկն է, որը հայտնի է իր գեղեցիկ բնությամբ, մաքուր օդով, բնական, պատմական և մշակութային հուշարձաններով: Համայնքի բնակչությունը 2021թ.-ի դրությամբ կազմում է 18,719 մարդ: Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 2022թ.-ի համար կազմում է 751220,319 հազար դրամ: Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը 40 % է (առավել մանրամասն տեղեկատվության համար այցելեք www.stepanavan.am):

Այժմ, համայնքում գործում են հիմնականում փոքր և միջին ձեռնարկություններ առևտրի, սպասարկման (հիմնականում սեզոնային աշխատող փոքր հյուրանոցներ, հյուրատներ), արտադրության (Լիմոնադի, քարի, փայտի մշակման, կահույքի, հացամթերքների արտադրության,

շինարարության) և գյուղատնտեսության ոլորտում: Համայնքի գլխավոր արտադրական ձեռնարկությունը հանքաքարի վերամշակմամբ զբաղվող «Սագամար» հանքարդյունաբերական կոմբինատն է, որը պղնձի և ցինկի խտանյութ է վերամշակում: ***Այս պահին կոմբինատը դադարեցրել է գործունեությունը, սակայն 2022 թ.-ին հավանաբար նախատեսվում է շարունակել աշխատանքները:***

Ստեփանավան համայնքում առկա են բոլոր ենթակառուցվածքները անհրաժեշտ բնակության համար՝ **կրթական** (8 հանրակրթական դպրոց, այդ թվում 1 ավագ դպրոց և 1 վարժարան, նախակրթարաններ, մանկապարտեզներ, այդ թվում պետական և մասնավոր, Գյուղատնտեսական քոլեջ, Արտակարգ իրավիճակների ակադեմիայի քոլեջ և բակալավրիատ, արվեստի և սպորտի դպրոց), **բժշկական** (հիվանդանոց և պոլիկլինիկա), **մշակութային ու ժամանցային՝** (մշակույթի տուն, թանգարաններ, կենտրոնական գրադարան, ակտիվ հանգստի ծառայություններ՝ պարանային այգի, ռաֆթինգ, արշավների, ձիավարության կազմակերպում, զբոսայգի և այլն): Առավել մանրամասն տեղեկատվության համար այցելեք http://visitstepanavan.am/.

Համայնքի գրեթե բոլոր ոլորտներում անհրաժեշտ է ենթակառուցվածքների բարեկարգում՝ սկսած փողոցներից, ջրային և այլ կոմունալ ենթակառուցվածքներից մինչև Աշոտաբերդի բնակելի թաղամաս, քաղաքային զբոսայգի, արվեստի դպրոց, գյուղական համայնքների ենթակառուցվածքներ, օդանավակայան և այլն:

Համայնքի առաջնային խնդիրը գործազրկությունն է և երիտասարդների արտահոսքը դեպի մարզկենտրոն, Երևան և այլ երկրներ, ինչի արդյունքում քաղաքում կա տնտեսական ակտիվության պակաս և որակյալ կադրերի խնդիր:

Համայնքի տեսլականը 2030թ-ի համար ու գերակա ուղությունները 2022-2026թթ. զարգացման ծրագրում՝

- Աշխարհին կապված զբոսաշրջային և համագործակցող համայնք
- Աշխատող, ագրոտնտեսապես զարգացած համայնք
- Կրթված, մշակութահեն, նորարարական և ժամանցով հագեցած համայնք
- Մրցունակ, հագեցած, ժամանակի մարտահրավերներին առաջ գանացող տեղական ինքակառավարում ունեցող համայնք
- Դիմակայուն, ինքնատիպ, կանաչ համայնք
- Առողջ և սպորտային համայնք

Ներկա պահին համայնքապետարանի կողմից տեղի ունեցող ու նախատեսված աշխատանքներ

Գալիք հինգ տարիների համար նախատեսվում են հանրապետական և մարզային ծրագրեր և միջոցառումներ կապված փողոցների բարեկարգման, «Աշոտաբերդ» թաղամասի հիմնախնդրի,

համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների և շքամուտքերի հիմնանորոգման, ինչպես նաև *էներգաարդյունավետության բարձրացման,* համայնքի մանկական այգու հիմնանորոգման, քաղաքային հրապարակի հիմնանորոգման, բազմաբնակարան շենքերի բակերում պարզ տիպի խաղահրապարակների կառուցման հետ:

Խնդիրը

Ինչպե՞ս կարող ենք դեպի Ստեփանավան ներգրավել բիզնեսին, գործարարներին և մրցունակ աշխատուժին:

Համաձայն մեր տեսլականի, համայնքի զարգացման ամենա էֆֆեկտիվ տարբերակն է ստեղծել միջավայր տնտեսապես ակտիվ հասարակության ու բիզնեսների ներգրավման ու մշտական բնակության համար: Ուստի խնդրում ենք մշակել ռազմավարություն դեպի Ստեփանավան խոշորացված համայնք տնտեսապես ակտիվ բնակչության ներգրավման և մշտական բնակության համար:

Ներկայացման ձևաչափ

- Դուք կունենաք **15 րոպե** Ձեր առաջարկությունը Ստեփանավանի քաղաքապետի և ժյուրիի այլ անդամների հետ կիսվելու համար՝ ներկայացնելով առավելագույնը **25 սլայդ**:
- Դուք կունենաք **10 րոպեանոց** հարցուպատասխանի ժամանակահատված, որի ընթացքում կարող եք օգտագործել ցանկացած լրացուցիչ սլայդ առանց քանակային սահմանափակումների:
- Ներկայացնողների թիվը **ԱՌԱՎԵԼԱԳՈՒՆԸ 5 (հինգ)**:
- Գրավոր պրեզենտացիաները կարող են լինել **թե՛ հայերեն, թե՛ անգլերեն**, սակայն բանավոր ներկայացումը **ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐԵԼ ՀԱՅԵՐԵՆՈՎ**:

Խնդիրը լուծելու համար տրամադրվող լրացուցիչ նյութեր

- ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ 2022-2026 ԹԹ
- Ստեփանավանի համայքապետարանի կողմից տրամադրված համառոտ տեղեկատվություն
- Շահառուների շրջանում իրականացված հետազոտության արդյունքներ
    - STEPANAVAN Deep Listening and Sense Making Document
    - STEPANAVAN Co-Creation Ground Document

- STEPANAVAN Collective Interpretation Sessions Results

- REPORT on Participatory Discussion over Modelling the Future of the City of Stepanavan in Lori Region, Armenia 2021
- ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ապագայի մոդելավորման փորձագիտական քննարկման զեկույց 2022